**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՎՏՈՄԱՏԱՅԻՆ ՀԵՌԱԽՈՍԱՅԻՆ ԿԱՅԱՆՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ**

**NՔԱԳՎ-ԳՀԱՊՁԲ-14/17**

ք.Երևան «21» [illegible] 2017թ.

ՀՀ ԿԱ քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչությունը ի դեմս աշխատակազմի ղեկավար Ա. Մանուկյանի, որը գործում է վարչության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և «Հայ սիտել եկոմ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Գ. Փանոսյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

**1.1.** Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի **N1** հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

## 2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**2.1 Գնորդն իրավունք ունի՝**

**2.1.1** Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են **5** օրից ավելի:

**2.1.2** Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի **6.3** կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

**2.1.3** Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի **6.2** կետով նախատեսված տույժը:

**2.1.4** Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի **6.2** կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

**2.1.5** Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի **6.2** կետով նախատեսված տույժը:

**2.1.6** Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

**2.1.7** Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում,եթե՝

ա)մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ)ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի,

2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

**2.2 Գնորդը պարտավոր է՝**

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում,ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները,իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի,տեսականու,որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.4 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

**2.3 Վաճառողն իրավունք ունի՝**

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով,ծավալներով,ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.4 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.4.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում,եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.5 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

**2.4 Վաճառողը պարտավոր է՝**

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով,ծավալներով,ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրամասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

## 3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է **13200000 (տասներեք միլիոն երկու հարյուր հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:** Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.2 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

## 4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

4.2 Հիմնական միջոց հանդիսացող ապրանքների համար երաշխիքային ժամկետ է սահմանվում Գնորդի կողմից ապրանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 730 օրացուցային օրը: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել մատակարարված ապրանքի թերություններ, ապա Վաճառողը պարտավոր է իր հաշվին, Գնորդի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

## 5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 6.ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակագումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 7.ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 8.ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

**8.2** Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

**8.3** Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

**8.4** Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

**8.5** Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

**8.6** Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև **30** օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

**8.7** Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

**8.8** Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորու-թյունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական

հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնություն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

**8.9** Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է **www.procurement.am** հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելու հաջորդող օրվանից:

**8.10** Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

**8.11** Պայմանագիրը կազմված է **6** էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի **N 1, N 2, N 3** և **N 3.1** հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

**8.12** Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

## 10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

**ԳՆՈՐԴ**

ՀՀ ԿԱ Քաղաքացիական
ավիացիայի
Գլխավոր վարչության
ք.Երևան 42 «Զվարթնոց» օ/կ
ՀՎՀՀ 01204231
ՀՀ ՖՆ աշխատակազմի
գործառնական
Վարչության
Հ/Հ 900013207023
Ա.Մանուկյան

------------------------------
/ստորագրություն/
Կ.Տ

**ՎԱՃԱՌՈՂ**

«Հայ սիտել եկոմ» ՍՊԸ
ք.Երևան, Չարենցի 1
«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1570015160020100
ՀՎՀՀ 01574474
Գ.Փանոսյան

------------------------------
/ստորագրություն/
Կ.Տ

*Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:*

Հավելված N1
«21» 2017թ. կնքված
ՔԱԳՎ-ԳՀԱՊՁԲ-14/17 ծածկագրով պայմանագրի

# ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ապրանքի | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը և ապրանքային նշանը | արտադրողը և ծագման երկիրը | տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | միավոր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | մատակարարման | | |
| | | | | | | | | | հասցեն | ենթակա քանակը | ժամկետը** |
| | | **Հեռահաղորդակցության պահարան 42U 600/800/1000** | Toten iek, Չինաստան | **Հեռահաղորդակցության պահարան 42U 19"**<br>**Ֆիզիկական բնութագրերը՝**<br>-չափերը՝ 600x1000x2085մմ.<br>-հովացուցիչներ՝ 4.<br>-դարակներ՝ 3.<br>-երկուէլ.սնուցման բլոկ (PDU)՝ 8վարդակով.<br>-աշխատանքային ջերմաստիճանը:0° մինչև +40° C.<br>-նշված սարքի սնուցումը կատարվում է փոփոխական լարման ցանցից՝ 220Վ,50Հզ: | հատ | | | 1 | | 1 | |
| | | **Անխափան սնուցման աղբյուր SMC1500I-2U** | APC Չինաստան | **Անխափան սնուցման աղբյուր APC Smart SMC1500I-2U**<br>**Ընդհանուր բնութագրերը՝**<br>-տեղադրում 19" տելեկոմունիկացիոն պահարան (2U Rack Mount 19"),<br>-նոմինալ մուտքային լարումը՝ 230Վ.<br>-մուտքային լարման տիրույթը՝ 180-287Վ.<br>-մուտքային հաճախությունը՝ 45-65 Հց.<br>-ելքային լարում՝ 230Վ ±5%.<br>-առավելագույն | հատ | | | 1 | | 1 | |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | հզորությունը՝ 1500 ՎԱ.<br>-արդյունավետ հզորությունը՝ 865Վտ,<br>-<br>ծանրաբեռնվածության պաշտպանությունը՝ առկա, AVR (Automatic Voltage Regulation).<br>-ավտոմատ կարգավորիչ՝ առկա.<br>-ինտերֆեյսը՝ USB.<br>-չափերը՝ 890 x 432 x 457մմ.<br>-աշխատանքային ջերմաստիճանը:0° մինչև +40° C: | | | | | |
| | | Կոմուտատոր PPHD-19-24-8P8C-C6-SH-110D | Hyperline Չինաստան | **Կոմուտատոր (Patch Panel) Hyperline PPHD-19-24-8P8C-C6-SH-110D, Cat6e, 24 port, RJ45**<br>-պորտերի քանակը՝ 24 x RJ45 Cat. 6e.<br>-<br>համապատասխանության՝ ANSI/TIA/EIA-568-B.2 Category 6.<br>-<br>համապատասխանության՝ TIA/EIA TSB-40.<br>-<br>համապատասխանության՝ ISO/IEC Generic Cabling Standard 11801:2002 ed.2.0.<br>-<br>համապատասխանության՝ CENELEC Generic Cabling Standard EN50173 - 1:2002.<br>-միացման միջիլ մալուխի տրամագիծը՝ 22-26 AWG.<br>-միջիլի գույնային կոդավորում համապատասխան՝ T568a և T568b.<br>-թվային մակնշում պորտերի դիմերեսին վահանակին՝առկա.<br>-գույն և թվային մակնշում կոնտակտներին հետ կողմի վահանակին՝ առկա.<br>-մալուխի պլաստիկ կապեր՝առկա.<br>-տեղադրում 19" տել եկոմունիկացիոն պահարան (1U 19" Rack Mount).<br>-ունիվկայական՝ 3P Cat. 6e.<br>-հորիզոնական տիպ. | հատ | | | 3 | 3 |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | -կենտակտների տեսակը՝ DUAL IDC: | | | | | |
| | | Ցանցային մալուխ PC-LPM UTP-RJ45-RJ45-C6-0.5M | Hyperline Չինաստան | **Ցանցային մալուխ UTP կրոսային RJ45 (Patch Cord RJ-45,Cat6E 50 cm Full)**<br>-երկարությունը՝ 50սմ.<br>-մալուխի տիպը՝ UTP.<br>-կատեգորիա՝ոլորված զույգ Cat.6E.<br>-զույգերի թիվը՝ 4.<br>-խրոց՝ RJ-45 Cat.6E: | հատ | | | 75 | 75 |
| | | Ցանցային մալուխ Cat 5e | Dintec Չինաստան | **Ցանցային մալուխ UTP4-C5E-SOLID-GY (Cable unshielded twisted pair, cat 5e)**<br>-մալուխի տիպը՝ UTP.<br>-կատեգորիա՝ոլորված զույգ Cat.5.<br>-զույգերի թիվը՝ 4: | մետր | | | 610 | 610 |
| | | Ցանցային երթուղիչ D-Link DFL-870 | D-link Չինաստան | **Երթուղիչ 6 կոնֆիգուրացվող պորտերով՝**<br>**Ինտերֆեյսներ և կապակցման տեսակ՝**<br>-6 պորտ 10/100/1000 BASE-T.<br>-2 պորտ USB 2.0.<br>-1 պորտ Console USB-mini միակցիչով.<br>-static IP, dynamic IP (DHCP).<br>-PPPoE, PPTP և L2TP:<br>**Արտադրողականություն՝**<br>-երթուղիչ կարողություն՝ 4Գբ/Վ.<br>-երթուղիչ կարողություն VPN՝ 1 Գբ/Վ.<br>-երթուղիչ կարողություն IPS՝ 1 Գբ/Վ.<br>-առավելագույն զուգահեռ սեսիա՝ 500000.<br>-Նոր սեսիաներ մեկ վայրկյանում՝ 45000.<br>-երթուղիչի կանոնների քանակը՝ 2000:<br>**Ցանցային ֆունկցիաները՝**<br>- DHCP server/client և DHCP Relay, IPv6.<br>- IP Multicast IGMPv3.<br>- Policy-based routing.<br>- IEEE 802.1Q VLAN՝ Up to 128 VLANs. | հատ | | | 1 | 1 |
| | | | | - Aggregation of channels:<br>**Վիրտուալ անձնական ցանցը (VPN)՝**<br>- VPN թունելներ՝ 200. | | | | | |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | -կոդավորման մեթոդը՝ DES, IKE և IKEv2.<br>-պահուստային VPN- Gateway IPSec.<br>- Hub and Spoke, IPSec NAT Traversal.<br>- Detection of inactive nodes.<br>- PPTP, L2TP server և client.<br>- SSL VPN6 և GRE:<br>**Թողունակության վերահսկում՝**<br>-թողունակությունը՝ երաշխավորված, դինամիկ, արտահերթ, առավելագույն.<br>- VPN-թունելի կառավարվող թողունակությունը.<br>- Traffic shaping ժամանակացույցի հիման վրա.<br>- Traffic shaping կանոնների հիման վրա.<br>- IDP traffic shaping:<br>**Երթուղիչ կառավարումը՝**<br>- Command Line Interface (CLI), Secure Shell (SSH) և Web GUI (HTTP / HTTPS).<br>- SNMP V1 / v2c.<br>- E-mail ծանուցումներ.<br>-երթուղի տեղեկամատյան.<br>-դիտարկումը արտադրողականության իրական ժամանակում:<br>**Ֆիզիկական բնութագրերը՝**<br>-չափերը՝ 278x183x44մմ, Rack Mount 19".<br>-քաշ՝ 1.7կգ.<br>-աշխատանքային ջերմաստիճանը՝ 0°մինչև +40°C.<br>-Նշված սարքի սնուցումը կատարվում է փոփոխական լարման ցանցից՝ 220Վ, 50Հց:<br>**Երաշխիքային ժամկետ 2տարի:** | | | | | |
| | | **Կառավարվող փոխարկիչ D-link DGS-1510-28XMP** | D-link Չինաստան | **24պորտ աջակցությամբ PoE 802.3af/802.3at (30Վտ), ընդհանուր PoE բյուջեն 370Վտ: Ինտերֆեյսներ և կապակցման տեսակ՝** | հատ | | | 4 | 4 |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | -24 պորտ 10/100/1000Base-T աջակցությամբ PoE, 4 պորտ 10G Base-X SFP+, պորտ 1x Console port RJ45.<br>-ստանդարտ գործառույթները՝ IEEE 802.3 10Base-T Ethernet, IEEE 802.3u 100Base-TX Fast Ethernet, IEEE 802.3ab 1000Base-T Gigabit Ethernet, 802.3ae 10 GbE, IEEE 802.3x flow control for full duplex mode, Auto-detection of speed.<br>-վիրտուալ stacking՝ D-Link Single IPկառավարում, մինչև 32 սարքեր,<br>-թողունակություն՝ մինչեւ 20Գբ.<br>-ֆիզիկական stacking՝ linear or ring topology, bandwidth in full duplex mode up to 40 Gb, up to 6 devices in the stack.<br>-2-րդ կարգի գործառույթները՝ Jumbo-frames մինչև 9000 բայթ, IGMP Snooping, IGMP v1/v2 Snooping, IGMP v3 awareness, աջակցություն մինչև 512 IGMP-խումբ, IGMP on VLAN, աջակցություն IGMP Snooping Querier, Support for up to 128 static multicast groups, IGMP Snooping Fast Leave based on a host, MLD Snooping, աջակցություն MLD v1/v2 awareness, աջակցություն 512 խմբերի, Support for 128 static multicast groups, MLD Snooping based on VLAN, MLD Fast Leave based on a node, MLD Snooping Querier, Spanning Tree Protocol, 802.1D STP, 802.1w RSTP, 802.1s MSTP, Loopback Detection,802.3ad Link Aggregation, Max. 32 groups per device / 8 ports per group, Port mirroring, Support for 4 groups of mirroring, One-to-One, Many-to-One, Support for mirroring for inbound / outbound / traffic in both directions, Multicast filtering, Redirect all unregistered groups, Filtering all unregistered groups, Ethernet Ring Protection Switching (ERPS).<br>-VLAN գործառույթները՝ VLAN 802.1Q Tagged VLAN, խմբերը VLAN 4K, VID 0-4096, GVRP, Asymmetric VLAN, Auto Voice VLAN, Auto Surveillance VLAN, MAC-Based VLAN, 802.1v Protocol-Based VLAN.<br>-ծառայությունների որակի գործառույթներ QoS՝ 802.1p priority queues, VLAN, MAC Addresses, Ether type, IP Addresses, DSCP, Type of protocol, TCP / UDP port numbers, DSCP for the IPv6 traffic class, IPv6 Stream Labels, 802.1p Quality of Service, Queue processing, Strict Priority Queue (SPQ), Weighted Round Robin (WRR), | | | | | | | |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | Deficit Round Robin (DRR), SPQ + WRR, 8 queues per port, Bandwidth management, Port-based (incoming / outgoing, with a minimum of 64 Kbps for 10/100 / 1000Base-T).<br>-3-րդ կարգի գործառույթները` ARP, 256 static ARP records, Support for Gratuitous ARP, IPv6 Neighbor Discovery (ND), 16 IP interfaces, Default route, Static Routing, Max. Number of IPv4 static route entries 64, Max. Number of IPv6 static route entries 32.<br>-մուտքի վերահսկման ցուցակներ (ACL)` 802.1p priority queues, VLAN, MAC Addresses, Ether type,IP addresses, DSCP, Type of protocol, TCP / UDP port numbers, DSCP for the IPv6 traffic class, IPv6 Stream Labels, ACL actions, Allow, Reject, Max. Number of access lists 256, Max. Number of rules 768, One or more ports (each rule), Scheduled ACL, ACL statistics.<br>-անվտանգության գործառույթները` Port Security, Supports up to 128 MAC addresses per port, Broadcast / Multicast / Unicast Storm Protection, Dynamic ARP Inspection, Static MAC address, D-Link Safeguard Engine, DHCP Server Screening, Preventing ARP Spoofing attacks, , Max. Count of entries 64, SSH, Support for SSH v2, Support for IPv4 / IPv6, Protection against BPDU attacks, Preventing DoS attacks, SSL, Support for v1 / v2 / v3, Support for IPv4 / IPv6, Segmentation of traffic, IP-MAC-Port Binding, DHCP snooping, IP Source Guard, Dynamic ARP inspection, IPv6 DHCP Guard, IPv6 RA Guard, IPv6 Snooping, IPv6 Source Guard, IPv6 ND Inspection, Protection against BPDU attacks.<br>-կառավարում` Web GUI, Telnet server, TFTP client, SNMP, Support for v1, v2c, v3, SNMP Trap, System log, ICMPv6, RMON v1, DHCP relay, NTP:<br>**Ֆիզիկական բնութագրերը`**<br>-չափերը` 440 x 308 x 44 մմ, Rack Mount 19".<br>-քաշ` 4.25կգ.<br>-աշխատանքային ջերմաստիճանը` 0°մինչև +40°C. | | | | | | | |
| 1 | 32541500 | **ԱՅՊԻ հեռախոսակայան MyPBX S300** | **Yeastar Չինաստան** | **Կարողությունները`**<br>-քանակը աբոնենտների` մինչև 300ներքին աբոնենտ.<br>-միաժամանակյա զանգեր` 60.<br>-ձայնային փոստ` 10000 րոպե.<br>-հնարավորություն | հատ | 13200000 | 13200000 | 1 | *ՀՀ ք. Երևան 42 «Զվարթնոց» օ/կ* | 1 | 30.08.2017թ. |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | տեղադրելու կոշտ սկավառակ՝ 2.5", SATA-2.<br>-տեղադրված մոդուլով՝ EX30, երեք E1 հոսքերի համար.<br>-հնարավորություն տեղադրելու մոդուլներ՝ 2x DSP D30, 3x EX08, 3x EX30:<br>**Հնարավորություններ՝**<br>-բոլոր զանգերի արձանագրումը.<br>-զանգի վերահասցեավորման ճկուն երթուղիներ.<br>-զանգի խլում և զանգի փոխանցում.<br>-հեռախոսակայանի բաժանորդի կողմից միաժամանակ մեկից ավել զանգեր ընդունելու հնարավորություն.<br>-զբաղված բաժանորդին մոտից զանգի ծանուցում.<br>-ռեժիմներ **Intercom,** սպասում և չանհանգստացնել **(DND).**<br>-ծանուցում **(Paging Call)** և ձայնային փոստ.<br>-հերթերի կազմակերպում.<br>-ինտերակտիվ ձայնային պատասխան **(IVR)** ճկուն կոնֆիգուրացիայով.<br>-երաժշտություն սպասման ռեժիմում **(Music On Hold).**<br>-ֆունկցիաարագ հավաքում.<br>-համակարգ (DISA - Direct Inward System Access).<br>-աբոնենտի անձնական գրասենյակ (MRI-MyPBX Recording Interface).<br>-աբոնենտի կարգավիճակի արտացոլում **(BLF).**<br>-հասանելիություն գծերին **PIN**-կոդով.<br>-հեռախոսագիրքը և սլ ցուցակ. | | | | | |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | -զանգերի դետալիզացիա (CDR).<br>- Autoprovision, LDAP.<br>-ռեժիմ Call Back և SIP SMS.<br>-վիդեո զանգերի աջակցություն:<br>**VoIP կարողությունները՝**<br>-պրոտոկոլներ՝ SIP 2.0 (RFC3261) և IAX2.<br>-տրանսպորտ՝ UDP, TCP և TLS.<br>-ձայնային կոդեկներ՝ G.711 (alaw/ulaw), G.722, G.726, G.729A, GSM, Speex, ADPCM և iLBC.<br>-վիդեո կոդեկներ՝ H261, H263p, H264 և MPEG4.<br>-ֆաքսի ապահովում՝ T.30, T.37, T.38 և G.711 Passthrough.<br>- DTMF ռեժիմ՝ In-band, RFC2833 և SIP INFO:<br>**Ցանցային կարողությունները՝**<br>-3 շահագործման ռեժիմ՝ static IP և dynamic IP (DHCP).<br>-կառավարումը՝ Web GUI.<br>- firewall, VLAN, PPPoE, QoS և DHCP-server:<br>**Ֆիզիկական բնութագիր՝**<br>-պրոցեսոր՝ Freescale i.MX 6Quad 1.2GHz ARM Cortex-A9 (quad cores).<br>- Flash հիշող.՝ 8Գբ.<br>-օպ.հիշող (RAM)՝ DDR3 2Գբ.<br>- LAN՝ 1 պորտ (10/100/1000Մբ/վ).<br>- WAN՝ 1 պորտ (10/100/1000 Մբ/վ).<br>- USB պորտ՝ 1x USB 2.0.<br>-չափերը՝ 440x252 x44մմ, Rack Mount 19".<br>-քաշ՝ 2,6կգ.<br>-աշխատանքային ջերմաստիճանը :0° մինչև +40° C.<br>-հզորությունը՝ 60Վտ (Max).<br>-սնուցումը կատարվում է փոփոխական լարման ցանցից՝ 220Վ, 50Հց:<br>**Մատակարարվող ապրանքի համար մասնակիցը պարտադիր պետք է ներկայացնի՝ Արտադրողի հավաստմա** | | | | | | | |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | նթերթիկը (Manufacturer authorization form).<br>**Երաշխիքային ժամկետ 3տարի:** | | | | | | |
| | | Հեռախոսային գետվեյ TA800 Gateway | **Yeastar Չինաստան** | Yeastar TA800 Gateway, (VoIP- FXS) 8 պորտ<br>**Կարողությունները՝**<br>-ճկուն երթուղայնացման կանոններ.<br>-ֆաքս աջակցություն.<br>- Echo canceller՝ ITU-T G.168 LEC.<br>-կառավարումը՝ Web GUI.<br>-ուղղակի և հետևող տրանսֆեր.<br>-զանգերի դետալիզացիա (CDR).<br>-երթուղայնացման Caller ID-ով.<br>-զանգի վերահասցեավորում՝ պատասխան չկա, երբ զբաղված և բոլոր զանգերը.<br>-ծանուցումը (Paging), և ցուցակ և զանգի սպասում.<br>-ռեժիմ չանհանգստացնել (DND).<br>-ընդունում և հաղորդում՝ Caller ID (BELL202, ETSI V23), NTT V23, DTMF-based CID).<br>- VLAN և QoS:<br>**Ցանցային կարողությունները՝**<br>-պրոտոկոլներ՝ SIP 2.0 (RFC3261) և IAX2,<br>-տրանսպորտ՝ UDP, TCP, TLS և SRTP.<br>- DTMF ռեժիմ : In-band, RFC2833 և SIP INFO.<br>-ձայնային կոդեկներ՝ G.711A/U-law, G.722, G.726, G.729a, GSM, ADPCM և Speex,<br>- firewall և VLAN.<br>-ցանցը՝ static IP և dynamic IP (DHCP).<br>- address translation՝ static NAT և STUN:<br>**Ֆիզիկական բնութագիր՝**<br>-8պորտ FXS.<br>-1պորտ LAN (10/100Մբ/վ).<br>-չափերը՝ 200 x 137 x 25.6մմ, Rack Mount 19".<br>-աշխատանքային | հատ | | | 1 | 1 | |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | ջերմաստիճանը:0° մինչև +40° C.<br>-սնուցումը կատարվում է փոփոխական լարման ցանցից՝ 220Վ, 50Հց:<br>**Մատակարարվող ապրանքի համար մասնակիցը պարտադիր պետք է ներկայացնի՝ Արտադրողի հավաստման թերթիկը (Manufacturer authorization form).**<br>**Երաշխիքային ժամկետ 3տարի:** | | | | | | | |
| | | Հեռախոսային Գետվեյ TA810 | **Yeastar Չինաստան** | **Yeastar TA810 Gateway, (VoIP- FXO) 8 պորտ**<br>**Կարողությունները՝**<br>-ճկուն երթուղայնացման կանոններ.<br>-ֆաքս աջակցություն.<br>- Echo canceller՝ ITU-T G.168 LEC.<br>-կառավարումը՝ Web GUI.<br>-սնցուցակ.<br>-զանգերի դետալիզացիա (CDR).<br>-երթուղայնացման Caller ID-ով.<br>-թեժ գիծ և Call Back.<br>-ընդունում և հաղորդում՝ Caller ID (BELL202, ETSI V23, NTT V23, DTMF-based CID).<br>- VLAN և QoS:<br>**Ցանցային կարողությունները՝**<br>-պրոտոկոլներ՝ SIP 2.0 (RFC3261) և IAX2,<br>-տրանսպորտ՝ UDP, TCP, TLS և SRTP.<br>- DTMF ռեժիմ: In-band, RFC2833 և SIP INFO.<br>-ձայնային կոդեկներ՝ G.711A/U-law, G.722, G.726, G.729a, GSM, ADPCM և Speex,<br>- firewall և VLAN.<br>-ցանցը՝ static IP, dynamic IP (DHCP).<br>- address translation՝ static NAT և STUN:<br>**Ֆիզիկական բնութագրերը՝**<br>-8պորտ FXO.<br>-1պորտ LAN (10/100Մբ/վ).<br>-չափերը՝ 200 x 137 x 25.6մմ, Rack Mount 19". | հատ | | | 1 | | 1 | |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | -աշխատանքային ջերմաստիճանը:0° մինչև +40° C.<br>-սնուցումը կատարվում է փոփոխական լարման ցանցից՝ 220Վ, 50Հց:<br>**Մատակարարվող ապրանքի համար մասնակիցը պարտադիր պետք է ներկայացնի՝ Արտադրողի հավաստման թերթիկը** (Manufacturer authorization form).<br>**Երաշխիքային ժամկետ 3տարի:** | | | | | | |
| | | **ՋՍՄ Շլյուզ** Yeastar TG400 Gateway, (VoIP-GSM) 4 GSM | Yeastar **Չինաստան** | Yeastar TG400 Gateway, (VoIP- GSM) 4 GSM **գծերի համար**<br>**Կարողությունները՝**<br>-4 GSM գիծ՝ 850/900/1800/1900 ՄՀց.<br>-ներկառուցված՝ SIP-proxy IP-հեռախոսների համար.<br>-մուտքային զանգերի երթուղայնացում.<br>-ելքային զանգերը երթուղայնացում.<br>-երթուղայնացման օպտիմալ ընտրությունը (LCR).<br>-խմբակային միավորումը՝ SIP-trunks և GSM-trunks.<br>- USSD հարցումները.<br>- SMS ուղարկելու և ստանալու (Web GUI).<br>-զանգվածային փոստային SMS.<br>- Open API USSD և SMS հարցումներ (Real Open API Protocol).<br>-թեժ փոխարինում SIM-քարտերի.<br>- Call Back.<br>-ցածր հաշվեկշռի իրազեկում.<br>-էխո ընդլայնումը համատեղ ITU-T G.168 LEC.<br>- EFR super sound:<br>**Ցանցային կարողությունները՝**<br>-պրոտոկոլներ՝ SIP 2.0 (RFC3261) և IAX2,<br>-տրանսպորտ՝ UDP, TCP, TLS և SRTP.<br>- DTMF ռեժիմ: In-band, RFC2833 և SIP INFO. | հատ | | | 1 | 1 | |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | -ձայնային կոդեկներ՝ G.711A/U-law, G.722, G.723.1, G.726 և G.729a.<br>- firewall և VLAN:<br>**Ֆիզիկական բնութագրերը՝**<br>- 4 GSM գիծ՝ 850/900/1800/1900 ՄՀց.<br>- 1 պորտ LAN (10/100 Մբ/վ).<br>- չափերը՝ 213 x 160 x 44 մմ.<br>- աշխատանքային ջերմաստիճանը: 0° մինչև +40° C.<br>- սնուցումը կատարվում է փոփոխական լարման ցանցից՝ 220Վ, 50Հց:<br>**Մատակարարվող ապրանքի համար մասնակիցը պարտադիր պետք է ներկայացնի՝ Արտադրողի հավաստման թերթիկը (Manufacturer authorization form).**<br>**Երաշխիքային ժամկետ 3 տարի:** | | | | | | | |
| | | **ԱՅՊԻ հեռախոս *GXP2170*** 11 հատ Atcom A68 4 հատ | Grantstream Atcom Չինաստան | **Կարողությունները՝**<br>- 6 SIP-Caller ID, անկախ կոնֆիգուրացիա.<br>- Hold (պահել), Mute (խոսափողի անջատում), չանհանգստացնել (DND).<br>- արագ հավաքում, թեժ գիծ, վերահասցեավորում, սպասման ռեժիմ, տրանսֆեր, խմբային լսում, SIP SMS, 3-կողմանի կոնֆերանս, մեղեդիներ ընտրություն (ներբեռնում և հեռացում).<br>- ավտոմատ ժամանակի կարգավորում և ձեռքով.<br>- համարի հավաքման կանոնները.<br>- XML-բրաուզերը, Action URL/URI.<br>- Ներկառուցված սքրինշոթեր.<br>- RTCP-XR (RFC3611), VQ-RTCPXR (RFC6035).<br>- ընտրակայում DSS-կոճակներ. | հատ | | | 15 | | 15 | |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | -USB-պորտ, որը HD ձայն: HD հեռախոս և HD միկրոֆոն.<br>-լայնաշերտկոդեկ՝ G.722.<br>-կոդեկներ G.711(A/u), G.729AB, G.726 և ILBC.<br>- DTMF՝ In-band, Out-of-band(RFC2833), SIP INFO և Auto or SIP INFO.<br>- Full-duplex, բարձր կապը AEC, VAD, CND, PLC, AJB և AGC:<br>-պրոտոկոլներ՝ SIPv1 (RFC2543) և SIPv2 (RFC3261).<br>-պահուստաին SIP-server և STUN-server.<br>-զանգի տեսակը՝ Proxy և peer-to-peer (ըստ IP-հասցեի).<br>-ցանցը՝ static IP, dynamic IP (DHCP), PPPoE և HTTP/HTTPS-server.<br>-ամսաթիվը և ժամանակի համաժամացում NTP միջոցով.<br>- UDP, TCP, DNS-SRV(RFC3263).<br>- QoS՝ 802.1p/Q tagging(VLAN), Layer 3 ToS DSCP.<br>- HTTPS-սերտիֆիկատների կառավարում.<br>-կոնֆիգուրացիոն ֆայլերի AES կոդավորում.<br>-կոդավորման և նույնականացում (MD5 եւ MD5-sess).<br>- IEEE802.1X, IPv6, LLDP/CDP/DHCP VLAN, ICE:<br>**Մատակարարվող ապրանքի համար մասնակիցը պարտադիր պետք է ներկայացնի՝ Արտադրողի հավաստման թերթիկը (Manufacturer authorization form):** | | | | |
| | | **Ընդլայնման մոդուլ ATCOM Rainbow ET** | Atcom Չինաստան | 4.3 inch 480*272 լուսավորմամբ.<br>-երկու էջանոց էկրանի:<br>**Ֆունկցիաները՝**<br>-20կոճակներ, LED երկակի գունավոր և ծրագրավորման հնարավորությամբ.<br>-38ծրագրավորվող կոճակները 2էջ էկրան. | հատ | | 4 | 4 |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | -ծրագրավորվող կոճակները՝ BLF, արագ հավաքում, Intercom, URL, հավաքելով, կոնֆերանս, տրանսֆեր, վերահասցեավորում, պահում, DND, վերահավաքում կանչը, զանգի վերադարձ, ձայնային փոստ, խումբ գրավումը, կայանում, խումբ է լսում, SMS, ընդհանուր գիծ, խմբի պահում, մասնավոր պահում<br>**Մատակարարվող ապրանքի համար մասնակիցը պարտադիր պետք է ներկայացնի՝ Արտադրողի հավաստման թերթիկը (Manufacturer authorization form):** | | | | | | |
| | | ԱՅՊԻ հեռախոս GAC2500 | Grantstream Չինաստան | Ներկառուցված HD դինամիկան հեռախոս և երեք HD միկրոֆոն.<br>-ձայնային կոդեկ՝ G.722 համապատասխան ստանդարտ TIA-920.<br>-ձայն գրավման աշխատանքային հեռավորությունը 3 մետր ծածկույթը 360°.<br>-կոդեկներ G.722, G.711(A/u), G.729AB, և ILBC.<br>-կողմնակի աղմուկի ճնշում.<br>- DTMF՝ In-band, Out-of-band(RFC2833), SIP INFO.<br>- Full-duplex, բարձր կապը AEC, VAD, CND, PLC, AJB և AGC:<br>**Հեռախոսագիրք՝**<br>-լոկալ հեռախոսագիրք մինչև 1000 կոնտակտ.<br>-սևցուցակ.<br>-հեռավոր հեռախոսագիրք XML և LDAP.<br>-խելացի որոնման.<br>-զանգերի պատմություն:<br>**Ինտեգրացիա IP-PBX**<br>**Մատակարարվող** | հատ | | | 1 | | 1 |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | **ապրանքի համար մասնակիցը պարտադիր պետք է ներկայացնի` Արտադրողի հավաստման թերթիկը (Manufacturer authorization form):** | | | | | | |

* Պարտադիր պայման է հանդիսանում ապրանքների չօգտագործված լինելը և մատակարարումը մինչև Գլխավոր վարչության մասնաշենք:

*Մատակարարը պետք է տեղադրի և կատարի սարքավորման բազային կոնֆիգուրացիա:

**մատակարարման վերջնաժամկետը չի կարող ավել լինել ,քան տվյալ տարվա դեկտեմբերի 15-ը :*

**ԳՆՈՐԴ**

ՀՀ ԿԱ Քաղաքացիական
ավիացիայի
Գլխավոր վարչության
ք.Երևան 42 «Զվարթնոց» օ/կ
ՀՎՀՀ 01204231
ՀՀ ՖՆ աշխատակազմի
գործառնական
Վարչության
Հ/Հ 900013207023
Ա.Մանուկյան

---------------------------

/ստորագրություն/
Կ.Տ

**ՎԱՃԱՌՈՂ**

«Հայսիտելեկոմ» ՍՊԸ
ք.Երևան, Չարենցի 1
«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1570015160020100
ՀՎՀՀ 01574474
Գ.Փանոսյան

---------------------------

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N2
«21» [illegible] 2017թ. կնքված
ՔԱԳՎ-ԳՀԱՊՁԲ-14/17 ծածկագրով պայմանագրի

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | Գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը` ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | Անվանումը | Ապրանքի դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2017թ-ին` ըստ ամիսների, այդ թվում** | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 32541500 | Ավտոմատային հեռախոսային կայանների համակարգեր | ... | ... | ... | ... | ... | ... | ... | 13200000 | 13200000 | 13200000 | 13200000 | 13200000 | 13200000 |

*Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:
**Հրավերում գումարները նշվում են տոկոսով, իսկ պայմանագիրը կնքելիս տոկոսի փոխարեն նշվում է կոնկրետ գումարի չափ

**ԳՆՈՐԴ**

ՀՀ ԿԱ Քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչություն
ք.Երևան 42 «Զվարթնոց» օ/կ
ՀՎՀՀ 01204231
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900013207023
Ա.Մանուկյան

---------------------
/ստորագրություն/
Կ.Տ

**ՎԱՃԱՌՈՂ**

«Հայսիտելեկոմ» ՍՊԸ
ք.Երևան, Չարենցի 1
«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1570015160020100
ՀՎՀՀ 01574474
Գ.Փանոսյան

---------------------
/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N3
«  » 2017թ. կնքված
ՔԱԳՎ-ԳՀԱՊՁԲ-14/17 ծածկագրով պայմանագրի

| Պայմանագրի կողմ | Պատվիրատու |
|---|---|
| ______________________ | ______________________ |
| ______________________ | ______________________ |
| գտնվելու վայրը ______________ | գտնվելու վայրը ______________ |
| հհ ______________________ | հհ ______________________ |
| ______________________ | ______________________ |
| հվհհ ______________________ | հվհհ ______________________ |

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
# ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

«   » «          » 20  թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
______________________

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «________________» 20 թ.
Պայմանագրի համարը՝ __________
Պատվիրատուն՝ ի դեմս ________________________________________ և
Պայմանագրի կողմը՝ ի դեմս ______________________________, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «________________» 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N_ եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված մատակարարումները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

| N | Մատակարարված ապրանքների | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
| | | | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Վերոհիշյալ մատակարարումների կատարման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

| Ապրանքը հանձնեց | Ապրանքն ընդունեց |
|---|---|
| ______________________ | ______________________ |
| ստորագրություն | ստորագրություն |
| ______________________ | ______________________ |
| ազգանուն, անուն | ազգանուն, անուն |
| Կ.Տ. | Կ.Տ. |

*Հավելված 3.1*
*« » 2017թ. կնքված*
*ՔԱԳՎ-ԳՀԱՊՁԲ-14/17 ծածկագրով պայմանագրի*

ԱԿՏ N______
պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ______________-ի (այսուհետ՝ Գնորդ) և ______________
Գնորդի անվանումը
Վաճառողի անվանումը
(այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. ________________-ին կնքված N________
պայմանագրի կնքման ամսաթիվը
պայմանագրի համարը
պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20թ. ____________-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

| Ապրանքի | | |
|---|---|---|
| անվանումը | չափման միավորը | քանակը (փաստացի) |
| | | |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

КՈՂՄԵՐԸ

**Հանձնեց** — **Ընդունեց**
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

______________________
ազգանուն, անուն

______________________
Ստորագրություն

______________________
ազգանուն, անուն

______________________
ստորագրություն